600.0087.20.04.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ապրիլի 2016 թվականի №87Ա

ք. Երևան

«ԻՓՐԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2009 թվականի ապրիլի 8-ի №151Ա որոշմամբ «ԻՓՐԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Քասախ գետի Գեղարոտ վտակի վրա «Ալպիական» փոքր հիդրոէլեկտրակայանի (այսուհետ՝ Կայան) կառուցման №0316 լիցենզիան (այսուհետ՝ Լիցենզիա)՝ մինչև 2013 թվականի մարտի 23-ը գործողության ժամկետով,

բ) Հանձնաժողովի 2013 թվականի մարտի 13-ի №81Ա որոշմամբ (այսուհետ՝ №81Ա որոշում) Լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 2016 թվականի մարտի 23-ը, իսկ որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով Ընկերությանը պարտավորեցվել է երկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել երեք միլիոն հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր դրամ գումար, սակայն այդ պարտավորությունը չի կատարել,

գ) Ընկերության կողմից №81Ա որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով Հանձնաժողովը 2013 թվականի օգոստոսի 13-ից հարուցել է վարչական վարույթ, որի շրջանակում 2013 թվականի օգոստոսի 28-ին ներկայացված №15-ՀԱ գրությամբ Ընկերությունը խնդրել է հնարավորություն տալ համապատասխան գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել մինչև 2014 թվականի մարտի 31-ը, սակայն №81Ա որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի

պահանջը չկատարելու առնչությամբ որևէ պարզաբանում կամ խոչընդոտող հանգամանք չի ներկայացրել,

դ) իրականացված վարչական վարույթի արդյունքում Հանձնաժողովի 2013 թվականի սեպտեմբերի 11-ի №325Ա որոշմամբ Լիցենզիայի գործողությունը կասեցվել է՝ մինչև խախտման պատճառի վերացումը,որը, սակայն, մինչև օրս չի վերացվել,

ե) Լիցենզիայի գործողության ժամկետի ավարտից մեկ օր առաջ՝ 2016 թվականի մարտի 22-ին, Ընկերությունը №22-ՀԱ գրությամբ դիմել է Հանձնաժողով՝ հայտնելով, որ Կայանի կառուցման նպատակով մեծ աշխատանքներ են կատարվել՝ համաձայն նախագծի, սակայն վերջին ժամանակներս Արագածոտնի մարզի Արագած համայնքի բնակչությունը և ղեկավարությունը կտրականապես դեմ են Կայանի կառուցմանը՝ բնապահպանական լուրջ խնդիրների առաջացման պատճառաբանությամբ: Շինարարության թույլտվություն ստանալու վերաբերյալ Ընկերության բազմաթիվ գրությունները մերժվել են: Ըստ այդմ, Ընկերությունը խնդրել է վերոնշյալը դիտարկել որպես ֆորսմաժորային հանգամանք և Լիցենզիան կասեցնել անորոշ ժամկետով՝ մինչև շինարարության թույլտվություն ստանալը,

զ) Ընկերությունը №22-ՀԱ գրությամբ ներկայացված հանգամանքների անկանխելիությունը և արտակարգությունը հիմնավորել է Արագածոտնի մարզի Արագած համայնքի ղեկավարի 2014 թվականի մայիսի 26-ի №08 և 2015 թվականի հունիսի 29-ի №09 գրություններով, որոնցով մերժվել է Կայանի կառուցման շինարարության թույլտվության տրամադրումն այն պատճառաբանությամբ, որ Կայանի կառուցման համար հատկացված տարածքում ընթանում են որոշակի փոփոխություններ, որոնց հետևանքով էականորեն փոփոխվել է ջրի ֆիզիկամեխանիկական կազմը. զգալիորեն ավելացել է ծանր միացությունների քանակը: «Գեղարոտ» գետի հունի վրա արդեն իսկ գործում են երկու հիդրոէլեկտրակայաններ, որոնց ճնշումային խողովակաշարի ընդհանուր երկարությունը կազմում է շուրջ 7 կիլոմետր: Կայանի կառուցման դեպքում (որի ճնշումային խողովակաշարի երկարությունը 2.8 կիլոմետր է) էական փոփոխության ենթարկված ջուրը կզրկվի ամբողջապես բաց հունով և գետի հունի ամենակարևոր հատվածում նստվածքներից զտվելու հնարավորությունից: Բացի այդ, կարևորվում է նաև գետի հունի վրա գտնվող ջրվեժը, որի անկումը մոտավորապես 12 մետր է, այն համարվում է տեսարժան վայր և, քանի որ գտնվում է նիշով ավելի ցածր կետում, քան Կայանի ճնշումային խողովակաշարի ջրհավաք ավազանն է, առկա է մտավախություն, որ սակավաջուր տարիներին ջրվեժը, գրեթե չի գործի, ինչն անընդունելի է համարվում,

է) Հանձնաժողովը 2016 թվականի ապրիլի 1-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում լիցենզավորման կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման կարգի (այսուհետ՝ Կարգ) 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված «ՎՏԲ-Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերության բանկային երաշխիքով երաշխավորված 6.375.000 դրամ գումարը ամբողջությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու հարցի ուսումնասիրության նպատակով,

ը) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2016 թվականի ապրիլի 6-ի №23-ՀԱ գրությամբ հայտնել է, որ 2016 թվականի մարտի 22-ի №22-ՀԱ գրությամբ արդեն տեղեկացրել է Կայանի կառուցմանը համապատասխան համայնքի ղեկավարության ու բնակչության դեմ լինելու հանգամանքի մասին և ներկայացրել հավաստող գրավոր ապացույցները: Ընկերությունը, միաժամանակ, նշել է, որ չի կարող պատասխանատվություն կրել ոչ իր մեղքով առաջացած հանգամանքի համար, քանի որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները,

թ) Կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքն ամբողջությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածում լիցենզավորված անձը չի ավարտել կայանի կառուցման աշխատանքները և չի դիմել լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու հայտով կամ Հանձնաժողովը մերժել է ներկայացված հայտը,

ժ) համաձայն Կարգի 11-րդ կետի՝ լիցենզավորված անձի ներկայացրած երաշխիքը Կարգով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե նրա կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է արտակարգ և անկանխելի դեպքերի ու հանգամանքների, որոնք ստեղծվել են նրա կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ,

ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, ինչպես նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են նրա գործունեությանը կամ հանգեցնում նրանց ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրանց գործադրած ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը,

ժա) համաձայն Կարգի 12-րդ կետի՝ լիցենզավորված անձը պարտավոր է Կարգի 11-րդ կետով սահմանված դեպքերում անհապաղ տեղեկացնել Հանձնաժողովին՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները,

ժբ) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում,

ժգ) «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիցենզիայի գործողության կասեցման ընթացքում լիցենզավորված անձն իրավունք չունի իրականացնել կասեցման որոշմամբ սահմանված գործունեություն, գործառույթ կամ գործողություն, բացառությամբ նրանց, որոնք ուղղված են լիցենզիայի գործողության կասեցման պատճառները վերացնելուն, ինչպես նաև կասեցման մասին որոշմամբ նախատեսված անհետաձգելի միջոցառումներն իրականացնելուն,

ժդ) վերը նշված իրավանորմերի և փաստական հանգամանքների վերլուծության, ինչպես նաև Ընկերության 2016 թվականի մարտի 21-ի №22-ՀԱ և 2016 թվականի ապրիլի 6-ի №23-ՀԱ գրությունների ու կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում Ընկերության կողմից որպես ֆորսմաժորային ներկայացված հանգամանքները (ինչպես արդեն նշվել է, որպես այդպիսին մատնանշել է այն, որ համապատասխան համայնքի ղեկավարի կողմից 2014 թվականի մայիսի 26-ի և 2015 թվականի հունիսի 29-ի գրություններով մերժվել է Կայանի կառուցման շինարարական թույլտվության տրամադրումը) սույն հարցի շրջանակում, Հանձնաժողովի գնահատմամբ, չեն հանդիսանում անկանխելի և արտակարգ, որոնք խոչընդոտել են Ընկերության կողմից իր պարտավորությունների կատարմանը, իսկ վերջինիս պահանջը՝ Լիցենզիայի գործողությունն անորոշ ժամկետով կասեցնելու վերաբերյալ, անհիմն: Մասնավորապես՝

1) անգամ եթե Ընկերությանը տրամադրվեր կառուցման շինարարական թույլտվություն, միևնույնն է, «Լիցենզավորման մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով, մինչև Հանձնաժողովի 2013 թվականի սեպտեմբերի 11-ի №325Ա որոշմամբ նախատեսված կասեցման պատճառի վերացումն Ընկերությունը իրավունք չէր ունենա որևէ գործողություն կատարել և սահմանված ժամկետում ավարտել Կայանի կառուցման աշխատանքները: Ինչպես արդեն նշվել է, Ընկերությունը Լիցենզիայի գործողության կասեցման պատճառի վերացմանը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե երեք միլիոն հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր դրամ գումարի փոխանցմանը խոչընդոտող որևէ պատճառաբանություն կամ հիմնավորում չի ներկայացրել և դրսևորել է անբարեխիղճ մոտեցում իր պարտավորությունների կատարման ուղղությամբ,

2) ավելին, Ընկերությանը տրամադրված՝ դեռևս 2011 թվականի ապրիլի 14-ին Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի կողմից հաստատված Կայանի կառուցման աշխատանքային նախագծի առնչությամբ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ԲՓ№24 եզրակացությամբ նշված նախագծի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն: Մինչդեռ Կայանի շինարարության թույլտվություն ստանալու նպատակով Ընկերությունը դիմել է միայն 2014 թվականին: Հարկ է փաստել նաև, որ Կայանի կառուցման շինարարության թույլտվության տրամադրումը մերժվել է տեղական ինքնակառավարման մարմնի գրությամբ՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն ունենալու պատճառաբանությամբ, այն պարագայում, երբ առկա չէ (Հանձնաժողով չի ներկայացվել) մերժման գրությունը հիմնավորող՝ շրջակա միջավայրի վրա Կայանի կառուցման բացասական ազդեցության վերաբերյալ համապատասխան մասնագիտական եզրակացություն կամ այլ հիմնավորող փաստաթուղթ: Ընկերությունն այս կապակցությամբ իր իրավունքների՝ վարչական կամ դատական կարգով պաշտպանության ուղղությամբ որևէ քայլ չի ձեռնարկել՝ չգործադրելով որևէ ջանք՝ վերացնելու իր պարտականությունների կատարմանը խոչընդոտող հանգամանքները, ինչն այդ հանգամանքները ֆորսմաժորային որակելու պարտադիր պայման է,

3) անդրադառնալով Ընկերության 2016 թվականի ապրիլի 6-ի №23-ՀԱ գրությանը՝ հարկ է փաստել, որ Ընկերության կողմից, որպես իր դիրքորոշումը հիմնավորող իրավական հիմք, նշվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածը, մինչդեռ տվյալ պարագայում՝ վարչական

հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությունը կիրառելի չէ: Հարկ է նշել նաև, որ Ընկերության ներկայացրած գրավոր փաստաթղթերին Հանձնաժողովն արդեն իսկ անդրադարձել է և վերստին փաստում է, որ դրանք որևէ կերպ չեն ապացուցում Ընկերության գործունեությանը խոչընդոտող ֆորսմաժորային հանգամանքների առկայության փաստը,

4) ինչպես արդեն նշվել է, Լիցենզիայի գործողությունը կասեցվել է՝ մինչև Ընկերության կողմից №81Ա որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջի կատարումը, իսկ Լիցենզիայի գործողության ժամկետն ավարտվել է սույն թվականի մարտի 23-ին, հետևաբար անորոշ ժամկետով դրա գործողության կասեցման մասին խոսք լինել չի կարող,

ժե) իրականացված վարչական վարույթի շրջանակում ապահովվել է նաև Ընկերության լսելի լինելու իրավունքը: Մասնավորապես, սույն թվականի ապրիլի 11-ին Ընկերության տնօրենի մասնակցությամբ Հանձնաժողովում կայացել է քննարկում: Վերջինս ներկայացրել է հարցի վերաբերյալ իր փաստարկները, որոնց առնչությամբ Հանձնաժողովի ներկայացուցիչների կողմից տրվել են հանգամանալից պարզաբանումներ,

ժզ) Համակողմանիորեն ուսումնասիրելով հարցին առնչվող բոլոր հանգամանքները՝ Հանձնաժողովի աշխատակազմը փաստում է, որ Կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետի հիմքով՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերության «Մոսկվա» մասնաճյուղի 2013 թվականի ապրիլի 26-ի №97 գրությամբ Հանձնաժողով ներկայացված բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված վեց միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար դրամ գումարն ամբողջությամբ ենթակա է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցման, քանի որ Ընկերությունը լիցենզիայով սահմանված ժամկետում չի ավարտել կայանի կառուցման աշխատանքները, չի վերացրել Լիցենզիայի գործողության կասեցման պատճառները, չի դիմել լիցենզիայի ժամկետը երկարաձգելու հայտով, և բացակայում է նշված երաշխիքը պետական բյուջե չփոխանցելու՝ Կարգի 11-րդ կետով նախատեսված հիմքը, և

հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ե» ենթակետը՝ Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում լիցենզավորման կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման կարգի 7-րդ կետի 2-ին ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերությանը՝ №0316 լիցենզիայի պայմանները չկատարելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մինչև 2016 թվականի ապրիլի 23-ը «ՎՏԲ-Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերության «Մոսկվա» մասնաճյուղի 2013 թվականի ապրիլի 26-ի №97 գրությամբ Հանձնաժողով ներկայացված բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված վեց միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար դրամ գումարը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:
2. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի՝

1) 2009 թվականի ապրիլի 8-ի «ԻՓՐԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ալպիական» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման լիցենզիա տրամադրելու մասին» №151Ա որոշումը,
2) 2010 թվականի հուլիսի 28-ի «ԻՓՐԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից «Ալպիական» փոքր հիդրոէլեկտրակայանի վերաբերյալ փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնելու ժամկետը երկարաձգելու մասին» №396Ա որոշումը,
3) 2013 թվականի փետրվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի ապրիլի 8-ի №151Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» №43Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
20 ապրիլի 2016թ.
ժամը 16^{00}